## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի «Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ք. Երևան, Ա. Արմենակյան 125 հասցեում, ստորև ներկայացնում է **«ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՍՀՋ-17»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի ընթացակարգի արդյունքում 2015թ. օգոստոսի 17-ին կնքված **ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՍՀՋ-17-01** պայմանագրում 2015թ սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

*Փոփոխության պատճառ:* Գնորդի մոտ առաջացել է մատակարարվելիք ապրանքների քանակների ավելացման անհրաժեշտություն:

*Փոփոխության նկարագրություն*: Պայմանագրով նախատեսված 1 չափաբաժինը ավելացնել, քանի որ ավելացել է ինդուստրիալ յուղի նկատմամբ պահանջարկը: Ավելացումից հետո պայմանագրի գինը կկազմի 2244000 ՀՀ դրամ:

*Փոփոխության հիմնավորում:* Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով պայմանագրի 9.4 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Կամո Բարսեղյանին:

*Հեռախոս*՝ 010 -65- 15-11 (16):

*Էլ. փոստ*՝ sevan_hr.gnum@mail.ru :

*Պատվիրատու*՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ